խորքը, որտեղ ուխտավորներն առանձին ջերմեռանդությամբ վառում էին լուսերը պատերի բոլոր քարերի վրա, ինչքան որ մարդու ձեռքն էր հասնում։ Այսօր էլ պահպանվում են կպցրած մոմերի և նրանց բոցերի հետքեր։ Հատակին թափթփված են առաստաղից և պատերից պոկ ընկած քարաբեկորներ։ Լճակների ջուրը երբեմն ամբողջ ամառվա ընթացքում ծածկված է մնում սառույցի շերտով։ Այդտեղի ջուրը համարվում էր սուրբ և հրաշագործ։ Երաշտի կամ մորեխի ժամանակ՝ ժողովուրդը տանում էր արտերում սրսկելու համար։ Տանողը պիտի մոտենար անխոս և նույնպես էլ անխոս, ետ-ետ դառնալով, դուրս գար։ Վերցնում էին նաև քարայրի խորքում պատերի տակից հողը՝ խլուրդը աղի հետ անասունին կամ հիվանդ երեխաներին տալու համար։ Եթե լճակների մեջ ջուրը ցամաքած էր լինում՝ գուշակում էին, որ տարին վատ է լինելու[62]։

Ուխտավորները սարքվում էին քերծի գագաթից դեպի արևելք տարածվող համեմատաբար հարթ հրապարակի վրա, որը կոչվում է Ղուրբան քաղաք՝ Մատաղի հրապարակ, այստեղ էր մորթվում մատաղը եկեղեցի իջնելուց հետո։ Հրապարակից եկեղեցի իջնելը շատ դժվարին է։ Մի նեղ կածան տանում է ներքև, քարից քար, մինչև որ ուխտավորը հասնում է մի տեղ, որտեղ գրեթե ժայռի երեսին փարվելով ստիպված է լինում քայլերը զգուշությամբ դնել ժայռակողի մեկ դուրս ցցվածքից մյուսին։ Նրա աչքերի առաջ ներքևում բացվում է ուղղաձիգ անդունդը։ Մի անզգույշ քայլ կարող է անփորձին վտանգի ենթարկել։ Վայր ընկնողի մեծ կտորը ականջը կմնար։ Այդ կապավ կարող էին անցնել միայն անմեղները։ Բնակիչները պատմում են, որ վայր գլորվելու դեպքեր եղել են։ Ուխտավորներն այդ կածանով իջնում էին ոտաբոբիկ, ոչ թե իրենց բարեպաշտության ապացույցներ տալու համար, այլև զգուշությունից դրդված։

Քերծի ձախակողմյան գագաթը կոչվում է ճգնավոր։ Այդտեղ ուխտավորները բարձրանում էին ժայռի ետևի կողմից, որտեղ լանջը թեև բավական զառիթափ է, բայց վերելքը հնարավոր է։ Այդտեղ էլ բարձրանում էին ոտաբոբիկ, բազմաթիվ ուխտավորների ոտքերի տակ դարերի ընթացքում ողորկված կողով։ Գագաթին փաթաթված է մի քարակույտ, որի տակ իբր թե թաղված էր մի անհայտ ճգնավոր[63]։

Խուստուփն այցելում էին թե՛ Կապանի և թե՛ Մեղրու շրջանի ոչ միայն մերձավոր, այլև շատ հեռավոր գյուղերի բնակիչները։ Երկու հազարի չափ դառ ու ոչխար էր մորթվում Ղուրբան Քաղաքի վրա։ Լեռն ամբողջովին կորչում էր ծխի մեջ, զուռնա-դավալը դղրդացնում էր շրջակայքը, մրգավաճառներն ու մանրավաճառները վխտում էին։ Այստեղ էլ քահանաները հավաքում էին իրենց բաժին մատաղի բուրդն ու մորթին։

Լեռների գագաթների պաշտամունքի հետ զուգորդված է նաև լեռնանցքների ոգիների պաշտամունքը։ Իմ մի աշխատության մեջ[64] նկարագրել եմ Հայկական լեռնաշխարհում լեռնանցքների մոտ կառուցված սրբավայրերը, որտեղ, ինչպես ալպյան Ս. Բերնարի և Ս. Գոտարդի լեռնանցքների մոտ կառուցված սրբավայրերում՝ ուղևորներն աղոթելով և մոմեր վառելով, աշխա-

---

[62] Քարայրի մեջ գիշերը ապաստան էին գտնում եղնիկն ու լեռնայծը։ Նրանց նստած տեղերում կուտակված է կրտէտ։ Թռչունները դուրս են թռչում պատերի ճեղքերի ու ծալքերի միջից, իրենց թևերի աղմուկով լցնելով քարայրը։

[63] Այդտեղից ոչ հեռու շինված է երկրաչափի կուրգանը իր համարի մակագրությամբ։

[64] Святыни у перевалов, «Советская этнография», 1936 г., № 4—5 էջ 200—201։